հօրս առաջ դրուած էր մի աղքատիկ խօնչայ (քա-
կուտեղ), որ ուրախ-ուրախ բացեց և դուրս բե-
բեց նրա միջից մի նիհար ու փոքրիկ գառը, մի
երկու սև ու չոր հացեր և մի ամանով էլ քացախ
գինի։ Հայրս ուրախ ու զուարթ կտրատեց իւր
ձեռքով և տուեց իւր ընտանիքի բոլոր անդամ-
ներին, որոնք երեսներին խաչակնքելով՝ սկսեցին
ուտել, բացի ինձանից։ Խռովել էի ես և չէի կա-
մենում մի բան ուտել, առարկելով հօրս ասանչ-
ին, թէ «մեր տանու պատրաստած լաւ-լաւ բա-
ներից կտաս՝ կուտեմ, ապա թէ ոչ՝ այս սև չոր
հացից ու մսից չեմ ուտի»։ Հայրս ծուռ-ծուռ նա-
յեց ինձ վրայ իւր սևորակ ու կրակոտ աչքերով
և ասանչս մի լաւ ոլորելով՝ դլխով նշան տը-
ւեց, որ իսկոյն հեռանամ և գնամ մօրս մօտ և ես
արտասուք կուլ տալով գնացի իմ մօրս մօտ...
Ահա զատկական այս արտակարգ սովորութիւնը
և հասարակական այսպիսի հացկերոյթը մեզ տա-
նում ու Առաքեալների ժամանակն է հասցնում,
նրանց միաբանական ճաշկերոյթներն է յիշե-
ցնում. երբ ամեն բան հասարակաց էր, երբ ա-
մենքը միասին էին ուտում ու խմում՝ «ի բեկա-
նել հացին ի սեղանոյ անտի»... Ուտիացոց աշ-
խարհում, երբոր մէկը իւր սեփական ոյժերով
անկարող է լինում տուն շինել, կամ իւր արտե-
րը ցանել, կամ ցանած և հասունացած հացահա-
հատիկները հնձել իւր ժամանակին, այսպիսի ան-
օգնական գիւղացին իսկոյն դիմում է իւր գիւ-
ղի համայնքի օգնութեան։ Նա իւրաքանչիւր տա-
նից մի-մի մարդ կանչում է «իմեաջի»—հաւա-